

Հրազդան Թոքմաջան

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան

hrazdantok@hotmail.com

ՄԱԼԱԹԻԱՅԻ ՅՅՈՒՄՎԱՆԸ ԿԱՐ*

Հիմնադրամեր. Հայկական ասեղնագործություն, Կիլիկիայի ասեղնագործություն, հյուսված կար, Մալաթիա, Մարաշ, զուգահեռ տեսակներ, ձեռագործ օժիտ:

Վերջին տարիներին, գործի բերումով, անհրաժեշտ էր ծանոթանալ հայկական ասեղնագործության վերաբերյալ եղած ուսումնասիրություններին, հոդվածներին, և այլն: Կարևոր էին և՛ Հայաստանում և՛ Սփյուռքում հրատարակված գրքերը: Միաժամանակ Մարաշի, Այնթապի, Ուրֆայի ասեղնագործության հազարավոր օրինակներ տեսնելու և լուսանկարելու հնարավորությունը մեծապես ընդարձակեց մեր պատկերացումը ասեղնագործության մասին: Այս իմաստով Հալեպում վերջին տարիների շփումը տարեց տիկիներին հետ ևս կարևոր փորձառություն էր մեզ համար:

Միաժամանակ այդ փորձառությունը ծանոթ տեսակետները վերանայելու, վերաիմաստավորելու հնարավորություն է տալիս: Անցյալի մի շարք անվանի հեղինակներ աշխատել են որոշակի պայմաններում, չեն ունեցել ուսումնասիրելու համար այն կարելիությունները, որոնք առկա են մեր օրերում:

2010 թ. հրատարակված «Մարաշի ասեղնագործություն» գրքի (Թոքմաջան 2010) համար հաջողվեց հսկայական նյութ հավաքել: Գիրքը պատրաստելիս մասնավորաբար հենվել ենք Սերիկ Դավթյանի նույնանուն ուսումնասիրության վրա: Նրա «Հայկական ասեղնագործություն» (Դավթյան 1972) և հատկապես «Մարաշի ասեղնագործություն» (Դավթյան 1978) գրքույկն է եղել մեր ուղեցույցը: Վերընթերցելով այս արժեքավոր աշխատանքը, կարելի է համոզվել այն հարցում, թե որքան մեծ կարևորություն է տվել հեղինակը Մարաշին բնորոշ ասեղնակարին՝ **հյուսված կարին** (այս և հետագա ընդգծումները հեղինակինն են): Ինչպես վկայում է փորձառու գիտնականը, բանվածքի այս տեսակը հատուկ է միայն Մարաշին¹: Երանուհի Հ. Հայտոյանը ևս գրել է այս մասին (Հայտոյան 1999, XC VII): Մալաթիայի տեսակի մասին նույնպես տես նույն գրքում (CXIX):

«Մարաշի ասեղնագործություն» գիրքը (Թոքմաջան 2010) կազմելիս, մենք փորձեցինք ներառել հատկապես թանգարաններում և մասնավոր հավաքածուներում

* Ստացվել է 31.05.2022 թ., ուղարկվել է գրախոսման 09.06.2022 թ., ընդունվել է տպագրության 05.08.2022 թ.:

¹ Վկայություններ կան այն մասին, որ Հնդկաստանում և Մալթա կղզում ասեղնակարի այս ձևը հայերի միջոցով է հայտնվել (Դավթյան 1978, 12):

րում պահվող հին ձեռագործները: **Հյուսված կարի** մի շարք արժեքավոր օրինակներ տեղ գտան այս գրքում:

Հավաքված ձեռագործները համադրելիս (2007–2010 թթ.) ուրվագծվում էր աշխատանքների մի խումբ, որը **հյուսված կարին** պատկանելով հանդերձ, որոշակիորեն առանձնանում էր մյուսներից: Այս խմբին բնորոշ տարբերությունները դժվար էր նեղ շրջանակներում բացատրել²: Սրանք կարող էին մի քանի բացատ-

² Այս խմբի ձեռագործները (դատելով մեզ ծանոթ օրինակներից) ունեն բնորոշ տարբերություններ: Սրանք Մարաշին վերաբերող ասեղնագործությունների շարքում առանձնանում են գունային կառուցվածքով, հորինվածքային առանձնահատկություններով, զարդանախշերով և ասեղնակարին վերաբերող տարբերություններով:

1. Գունային կառուցվածք. այս խմբին պատկանող բոլոր ձեռագործները բացառությամբ մի քանի փոքր օրինակների, (Դավթյան 1972, CXXII) և կտորի վրա են ասեղնագործված: Ասեղնագործության գերակշռող մասը կարմիր թելով է արված: Այդ իսկ պատճառով, չնայած որոշ հատվածներում օգտագործվող սպիտակի, կապույտի, կանաչի և դեղինի, որոշիչ է սևի և կարմիրի փոխհարաբերությունը: Եթե զուգահեռ դիտարկենք Մարաշին բնորոշ ծածկոցները, ապա կտեսնենք, որ կտորի գույնը յուրաքանչյուր դեպքում փոխվում է, որը իր հետ բերում է ասեղնագործության գույների փոփոխության:

2. Հորինվածք. հորինվածքով ևս այս աշխատանքները որոշակիորեն տարբերվում են Մարաշին հատուկ գործերից: Ընդհանրապես, եթե դիտարկվող ձեռագործները վարագույրներ կամ հատուկ նպատակի համար պատրաստված ծածկոցներ չեն՝ վերմակի երեսներ են: Բոլորից շատ համդիպում են այսպիսի աշխատանքներ: Հաճախ պատահող փոքր չափի ձեռագործները ուղղանկյուն ծածկոցներ կամ բարձի (փոքր ներքնակի) երեսներ են:

Վերմակի երեսների հորինվածքային ամենաբնորոշ առանձնահատկություններից կարելի է նշել այն, որ կենտրոնական վարդյակը մշտապես տեղադրված է խիտ ասեղնագործությամբ ստացված վանդակավոր մակերեսի կենտրոնում: Որպես կանոն, ծածկոցը չունի ամբողջ մակերեսը շրջանակող եզրագուծի: Մարաշից եկած վերմակի երեսները ոչ միայն ունեն հորինվածքը երիզող համապատասխան զարդագուծի, այլև հաճախ իրարից տարբերվում են կենտրոնական վարդյակներով: Եթե Մալաթիայի դեպքում վարդյակը որոշակի, կոտ կառուցվածք ունեցող կլոր վահան է, ապա Մարաշի դեպքում այն կարող է լինել թե կլոր, թե ումբաձև (շեղանկյուն):

Մարաշի և Մալաթիայի ծածկոցների վարդյակները միմյանցից տարբերվում են ոչ միայն արտաքին, այլև ներքին կառուցվածքով: Յուրաքանչյուր խումբը ունի բնորոշ, օրինաչափություններ և հիմնական առանձնահատկություններ: Մարաշի դեպքում դրանցից է վարդյակի կենտրոնում, գրեթե միշտ տեղադրվող խաչաձև պատկերանշանը: Նման լուծում ունեցող Մալաթիայի որևէ օրինակ չենք տեսել: Մալաթիային բնորոշ վարդյակի կենտրոնում, հատուկ նշան բացառություններով, տեղադրված է շրջանաձև միջուկ, որը կազմված է ներգծված գունավոր օղակներից (նկ. 1, նկ. 2): (Լևոն Վարդանի Տեր-Պետրոսյանի հավաքածուում կա մի այսպիսի ծածկոց, որի վարդյակի միջուկը ութթևանի աստղ է, կազմված նույն տրամաբանությամբ՝ միմյանց մեջ ներդրված բազմագույն աստղիկներից): Հավաքորդ Հրաչ Գեղոյությունյանի հավաքածուում կա մի մեծ ծածկոց, որի վարդյակների կենտրոնական մասում զուգահեռաբար օգտագործված է և՛ շրջանաձև, և՛ աստղաձև միջուկ: Այս միջուկն ինքնին, առանց վարդյակը կազմող զարդագուծիների, փոքր ծածկոցների համար վարդյակի դեր է կատարում: Սա ևս անփոփոխ օրինաչափություն է Մալաթիայի ձեռագործների համար:

Փոքր ծածկոցները ի տարբերություն մեծերի ունեն եզրագուծներ: Ավելին, ծածկոցը երիզող շրջանակից դուրս, փոքր, հանդիպակած կողմերում կան լրացուցիչ գուծներ՝ կրկնվող խորհրդանշական զարդանախշերով:

3. Զարդանախշեր. Այս խմբին պատկանող ձեռագործների զարդանախշերը ևս առանձնահատուկ են: Գրեթե բոլոր աշխատանքներում առատորեն օգտագործվում են վիշապի պատկերները: Կենտրոնական մեծ վարդյակները ընդհանրապես գոտևորված են վիշապի պատկերներով: Փոքր ծածկոցների եզրագուծները ևս շատ հաճախ կազմված են

րություն ունենալ: Ենթադրելի էր ժամանակի գործոնը, մարաշցիների նախասիրությունների բազմազանությունը (**կոթ ասեղի՝** Զեյթունի կարի առկայությունը դրա ապացույցն է), քաղաքի բնակչության նախնիների տարբեր բնակավայրերից հավաքված լինելը:

Ավելորդ չէ նշել, որ ուսումնասիրությունների ընդունված կարգը ևս ունի կարևոր թերություն: Ցավոք, կենտրոնանալով որոշակի մեծ բնակավայրերի վրա (Մարաշ, Այնթապ, Ուրֆա), անտեսվել է սրանց շրջակա գյուղաբնակ հայությունը: Եթե այս հարցին ուշադրություն դարձվեր այն ժամանակ, երբ դեռ ապրում էր մեր տարագիր հայրենակիցների առաջին սերունդը, հնարավոր կլիներ ամբողջական պատկերացում կազմել ոչ միայն Մարաշ քաղաքի ձեռագործ աշխատանքների առանձնահատկությունների մասին, այլև նրա շրջակա գյուղերում ձևավորված ոճական առանձնահատկությունների: Ուստի և զուտ գիտական տեսակետից պետք է ընդունել, որ շրջանին բնորոշ ասեղնագործությունը միայն պայմանականորեն կարելի է Մարաշին վերագրել:

Մեր գրքի հրատարակությանը հաջորդած տարիներն ապացուցեցին, որ հիշված ձեռագործները, նրանց առանձնահատկությունները, կարոտ էին ավելի լուրջ ուշադրության:

Նման մի ծածկոց տպագրված է Ս. Դավթյանի «Մարաշի ասեղնագործություն» գրքում (Դավթյան 1978, 41): Մի շարք այլ հրատարակություններում ևս կան

կոթք-կոդքի շարված «վիշապիկ»ներով: Փակ և կիսաբաց սերմ-հատիկի պատկերները, ճյուղավորված կենաց ծառերը առանձնահատուկ ոճավորում ունեն: Եթե այս զարդաները համեմատենք **հյուսված կարով** բանված այլ զարդաների հետ, կհամոզվենք, որ սրանք այլ ավանդույթից են գալիս և անհամեմատ հնաժող են:

4. Ասեղնակար. Մալաթիային վերագրվող աշխատանքները առանձնանում են նաև ասեղնակարի հետ կապված առանձնահատկություններով: Չնայած այն հանգամանքին, որ քննարկվող բոլոր աշխատանքները վերաբերում են **հյուսված կարին**, այս խմբի ասեղնակարը ունի տարբերություններ:

Եթե արտաքին տեսքով դատելու լինենք, կտեսնենք, որ Մալաթիայի ձեռագործների դեպքում կտորի մակերեսը առավելագույնս ծածկված է ասեղնակարով, նախշերը խիտ են դասավորված, հյուսվածքը համեմատաբար «կոպիտ է և ցանցառ»: Սակայն տեսանելի տարբերությունից բացի կան հենց հյուսվածքին վերաբերող բնորոշիչ առանձնահատկություններ: Մարաշի ասեղնագործությունը լավապես ուսումնասիրված և գործնական ասեղնագործության մեծ փորձ ունեցող Լուսինե Մյիթաթյանը (Մյիթաթյան 2020) Մարաշի **հյուսված կարը** բաժանում է 9 ենթատեսակների: Հիշյալ ենթատեսակները ներկայացնելը կթողնենք ավելի հարմար առիթի: Սակայն պետք է հիշենք, որ Մարաշին բնորոշ ձեռագործներում կիրառվել է 9 ենթատեսակներից 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 8-րդ տարբերակները: Ըստ Մյիթաթյանի վերլուծության, այստեղ չկան բարդ հյուսքեր, միայն 4-շարքանի **հյուսված կարի** տարբեր նախշեր են:

Ինչ վերաբերում է Մալաթիային վերաբերող աշխատանքներին, ապա հիշյալ ինը տարատեսակներից կիրառվել են 5-րդ, 6-րդ, և 9-րդ տարբերակները: Ի տարբերություն Մարաշի, այստեղ **հյուսված կարի** բազմաշարք՝ 4 շարքանի, 8 շարքանի, 12 շարքանի բարդ հյուսքեր և նախշեր են կիրառված:

Մալաթիայի դեպքում, որպես բնորոշ կողմ, ուղեկցող ասեղնակարեր են **շղթայակարը** և **շուլակ կարը**:

Մեր կարծիքով Մալաթիայի ասեղնագործություններում սպիտակ **շուլակ կարը** ծառայել է սև մակերեսի վրա հորինվածքը գծագրելու, կողմնորոշիչ սահմաններ ունենալու նպատակին:

նմանատիպ ձեռագործներ, որոնք ներկայացվում են երբեմն որպես Մարաշի, երբեմն՝ որպես Մալաթիայի գործ:

Նախապես մենք այն կարծիքին էինք, որ այսպիսի ձեռագործները Մալաթիային վերագրելը շփոթության արդյունք է՝ մանավանդ երկու քաղաքների մոտիկությունը նկատի ունենալով: Սակայն, ինչպես ցույց տվեց ժամանակը, ամենալուրջ հիմքերը կան այս ձեռագործները Մալաթիային վերագրելու համար:

Նախ փորձենք ի մի բերել մեր ունեցած տվյալները:

1. Նման առաջին ձեռագործը մենք տեսել ենք Ս. Դավթյանի «Մարաշի ասեղնագործություն» գրքում, Մարաշի հարթակար և **հյուսված կարով** ձեռագործների շարքին (Դավթյան 1978, 41): Այստեղ ոչ միայն լուսանկարը բացատրություն չունի, այլև բովանդակության մեջ ձեռագործին որևէ անդրադարձ չկա:

2. «Մարաշի ասեղնագործություն» (Թոքմաջյան, 2010) գիրքը պատրաստելիս երկու նման ասեղնագործ ծածկոց (ներքնակի կամ բարձի երես) մեզ տրամադրեց հալեպաբնակ հավաքորդ Պետրոս Երամյանը (նկ. 3, 4): Երամյանը ձեռագործները գնել էր Հալեպում՝ հնավաճառից: Որևէ կողմնակի տեղեկություն հայտնի չէ սրանց մասին:

3. «Մարաշի ասեղնագործություն» գրքում (Թոքմաջյան 2010, 80) ներկայացված է մի մեծ ծածկոց (վերնակի երես), որը մաս է կազմում մեր հավաքածուի: Այն գնվել է Հալեպում, հնավաճառի խանութից: Աշխատողի և աշխատանքի վայրի մասին որևէ տեղեկություն հայտնի չէ:

Նույն հնավաճառից որոշ ժամանակ անց, Գ. Վասպուրական Մշկթ. Միությունը գնել է նույն ձեռագործի զույգը: Այն ճշգրիտ կրկնությունն է առաջինի և ամենայն հավանականությամբ նույն ընտանիքին է պատկանել: Այս դեպքում ևս որևէ կողմնակի տեղեկություն մեզ չի հասել:

4. «Tapis Et Textiles Armenians» գրքում (Kevorkian, Ashdjan 1991, 138) տպագրված է Հայաստանի պատմության թանգարանում պահվող (№1152) մի ձեռագործ: Այստեղ ձեռագործը ներկայացված է որպես Մարաշի գործ:

5. «Հայաստան և փորագրատիպի արվեստը» (Շահին 1982, 125) գրքում տպագրված են չորս ձեռագործներ, որոնք ներկայացված են մեկ ընդհանուր բացատրությամբ՝ որպես Մարաշի գործ: Ձեռագործները ներկայացված են նույն դասավորությամբ ինչպես որ Ս. Դավթյանի «Հայկական ասեղնագործություն» գրքում են տպագրված (Դավթյան 1972, CXXII): Ուստի և կարելի է ենթադրել, որ վերցված են այս գրքից: Այստեղ ձեռագործները ներկայացվել է հետևյալ կերպ. «1–4 ծածկոցներ, գորգուղի (Մարաշ)»: (Մեր կարծիքով ծածկոցներից երրորդը չափազանց նման է Մալաթիայի ձեռագործին:)

Նույն գրքում Ս. Դավթյանը ներկայացրել է ևս մեկ ձեռագործ (Դավթյան 1972, XII) «Մարաշի հյուսված կար» բացատրությամբ: Այս ձեռագործը ևս չափազանց նման է Մալաթիայից եկած աշխատանքներին: Հիմնական տարբերությունն այն է, որ բանված է կարմիր կտորի վրա:

6. Մարսելում հրատարակված «Trames d'Armenie» (Kevorkian, Kouymjian, Allier 2007) գրքում տպագրված են նույն ձեռագործները՝ ավելի մանրամասն բացատրությամբ (նկ. 5): Թիվ 1–2-ը ներկայացված են որպես Մարաշի գործ (մանկական

բարձի երեսներ), թիվ 3-ը՝ Մալաթիայի գործ (բարձի երեսի հատված), թիվ 4-ը՝ Մարաշի գործ և թիվ 5-ը՝ Մարաշի գործ (վերմակի երես): Այստեղ մենք տեսնում ենք նաև կարմիր կերպասի վրա աշխատված ձեռագործը՝ ներկայացված որպես Մալաթիայի գործ (բարձի երես) (թիվ 6): Գրքում կա ևս մի աշխատանք, որը տպված է միագույն և ներկայացված որպես Մալաթիայի գործ (բարձի երես) (թիվ 9):

7. Լիբանանահայ օգնության խաչի հրատարակած Հայկական ասեղնագործություն գիրքն (Ղազարյան, Հայտության 1999) ունի Մարաշի ձեռագործին նվիրված բաժին, որտեղ տպագրված է մի վարագույր (Խոշյան, Հայտության 1999, 57): Սեփականատերը Անահիտ Մեղրակ Փոլադյանն է: Ձեռագործի հեղինակն անհայտ է, սակայն ունի հստակ թվագրություն՝ 1914: (Ցանկալի է պարզել, թե ո՞րտեղից է հայտնի ներկայացված թվականը):

8. 2009 թ. Հալեպում հնավաճառից մեր գնած Մարաշի ասեղնագործությամբ (Թոքմաշյան 2010, 70) մի ծածկոցի վնասված մասը կարկատված էր: Կարկատանը, որը ավից մի քիչ մեծ կտոր է (25×15սմ.), ավելի հին ձեռագործի պատառիկ է (նկ. 6): Սև կերպասի վրա նշմարելի է կարմիր թելով աշխատված զարդագոտուց մի հատված: Մեզ թվում է, որ սա ևս Մալաթիայի հին ձեռագործից պատահաբար մնացած նմուշ է:

Ձեռագործ ծածկոցը, անկասկած, Մարաշի ասեղնագործության արժեքավոր օրինակ է, սակայն տվյալներ նրա ստեղծման վայրի մասին չկան: Բնականաբար, նրան կցված կարկատանի մասին ևս մենք տեղեկություններ չունենք:

9. Հալեպում Ուրֆայի Վերածնունդ մշակութային միության 2011 թ. կազմակերպած ձեռագործի ցուցահանդեսում, մի շարք աշխատանքների կողքին, ցուցադրված էին մեզ հետաքրքրող երկու ծածկոց (նկ. 7, 8): Այս ձեռագործները պատկանում են Թամար Գարակյուլեյանին, նրա ամուսնու Վաչե Ինջեյանի հոր մեծ մոր աշխատանքներն են: Տիկին Եղիսաբեթ Ինջեյանը մալաթիացի է և Հալեպում հաստատվել է Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, տեղահանությունների հետևանքով:

10. Հալեպում Տիկին Հռիփ Կանանյանի մոտ է գտնվում իր ամուսնու հոր մեծ մոր՝ Նարդուհի Տարագչյանի (նկ. 9) վերմակի երեսը, որը մաշված սակայն չափազանց արժեքավոր ձեռագործ է (նկ. 10): 2013 թ. Սուրիահայ օգնության խաչի կազմակերպած հանդիսավոր մի միջոցառման ժամանակ այն փոխված էր բանախոսի առջև դրված սեղանին:

Մեր թվարկած օրինակներից բացի, էլեկտրոնային կայքէջերում, կամ վաճառքի, կամ ցուցադրության համար, ժամանակ առ ժամանակ երևան են գալիս մեզ հետաքրքրող ձեռագործներին հար և նման բանվածքներ: Սրանք ներկայացվում են երբեմն որպես Մարաշի, երբեմն էլ որպես Մալաթիայի գործ:

Առկա տվյալները ի մի բերելու դեպքում կհամոզվենք, որ ներկա դրությամբ, մեր քննարկած ձեռագործների զգալի մասը իրենց ուղեկցող որևէ տվյալ, լրացուցիչ տեղեկություն չունեն: Իսկ այն երկու դեպքերը, երբ շփոթության կամ թյուրիմացության խնդիր չկա, և հայտնի են ձեռագործի հեղինակները, պարզվում է, որ բանված են Մալաթիայում: Կարծում եմ՝ ակնհայտ է, որ վերոհիշյալ աշխատանքները կամայականորեն են վերագրվում Մարաշին:

Մեր կարծիքով հարցը կփոխվի, եթե գտնվի նման ձեռագործ, որը փաստացիորեն աշխատված է Մարաշում: Միաժամանակ մենք, առաջարկելով ձեռագործների այս խումբը դիտարկել որպես Մալաթիային բնորոշ երևույթ, չենք բացառում այդ երկու քաղաքների միջև փոխառնչությունները: Տեղափոխությունների, ամուսնությունների արդյունքում կարող էին մալաթիացի հայուհիներ Մարաշում և մարաշցիներ Մալաթիայում հայտնված լինել և իրենց հետ տանել իրենց սովորությունները: Սակայն նույն առնչությունները, որքան էլ բնական, չեն կարող հերքել ներկա փաստերը՝ Մարաշի և Մալաթիայի **հյուսված կարի** գուգահեռ գոյությունը³:

Այսպիսով, ընդհանրացնելով մեր ունեցած տվյալները, կարելի է եզրակացնել հետևյալը.

1. Ս. Դավթյանի բնորոշմամբ զուտ հայկական **հյուսված կարը** հատուկ է եղել ոչ միայն Մարաշին, այլև Մալաթիային:

2. Մալաթիայի ասեղնագործությունը որոշակի հատկանիշներով տարբերվում է Մարաշին բնորոշ ձեռագործից և հանդիսանում է **հյուսված կարի** ինքնուրույն տարբերակ:

Այս տեսակետից մեկնելով ուսումնասիրելը կարևոր է մի քանի առումներով: Նախ հնարավորություն կունենանք առանձին վերնագրի տակ հավաքել նման ձեռագործների նմուշները և ենթարկել լուրջ, բաղդատական ուսումնասիրության: Մալաթիայի ասեղը՝ **հյուսված կարը**, դատելով ծանոթ օրինակներից, բացառիկ կարևորության երևույթ է: Հինավուրց ձևերի առատությամբ, նրանց կանոնավոր օգտագործմամբ մեզ հասած աշխատանքները առանձնակի ուշադրության են արժանի:

Միաժամանակ Մալաթիայի **հյուսված կարի** գոյությունը ինքնաբերաբար փաստատում, ամրացնում է Ս. Դավթյանի այն տեսակետը, որ **հյուսված կարը** հայկական երևույթ է (Դավթյան 1978, 12): Բնական է ակնկալել, որ հյուսված կարը իր բնօրրանում՝ Հայաստանում ունենա իր տարբերակները, առավել մոտ կամ հեռու դրսևորումները: Մարաշի և Մալաթիայի աշխարհագրական դիրքը նկատի ունենալով, պետք է եզրակացնել, որ լիովին օրինաչափ են այս երկու քաղաքներին բնորոշ ասեղնակարերի և՛ նմանությունները, և՛ տարբերությունները: Մեր կարծիքով **հյուսված կարը** իր երկու ճյուղերով ուսումնասիրելիս՝ ավելի մեծ հնարավորություններ կառաջանան այս հետաքրքրական երևույթի ծագման հարցը պարզաբանելու համար:

Ինչ վերաբերում է Ս. Դավթյանի «Մարաշի ասեղնագործություն» գրքում հայտնված վերոհիշյալ ձեռագործին, այն մեր կարծիքով թյուրիմացության արդյունք է (Դավթյան 1978, 41): Ցավոք մեզ հայտնի չէ, թե երախտաշատ գիտնական

³ Որպես օրինաչափ երևույթ հայտնի է, որ մարաշցի աղջիկները Զեյթուն են հարս գնացել: Նման փոխառնչությունները անկասկած իրենց հետքն են թողել և՛ կենցաղի և՛ կիրառական արվեստի վրայ: Մարաշի հարթակարը, որը ըստ Ս. Դավթյանի անվանվում է նաև կոթ ասեղ և Զեյթունի կար, առանձին հետաքրքրություն ներկայացնող թեմա է (Դավթյան 1978, 6):

նը ինչ նպատակով է այն ներառել գրքում: Հավանաբար **հյուսված կարի** նշանակությունն է որոշիչ եղել⁴:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԴԱՎԹՅԱՆ 1972 – Դավթյան Ս., Հայկական ասեղնագործություն, Երևան, 1972 :

ԴԱՎԹՅԱՆ 1978 – Դավթյան Ս., Մարաշի ասեղնագործություն, Երևան, 1978:

ԹՈՔՄԱԶՅԱՆ 2010 – Թոքմաջյան Հ., Մարաշի ասեղնագործություն, Հալեպ, 2010:

ՂԱԶԱՐՅԱՆ, ՀԱՅՏՈՍԹՅԱՆ 1999 – Ղազարյան Մ., Հայտնության Ե., Հայկական ասեղնագործություն, Բեյրութ, 1999:

ՄՈՒՐԱԴՅԱՆ 2015 – Մուրադյան Ս., Գործվածքի հայտնության քառույթներում, Երևան, 2015:

ՄԽԻԹԱՐՅԱՆ 2020 – Մխիթարյան Լ., Մարաշի ասեղնագործության գաղտնիքները, Երևան, 2020:

ՇԱՀԻՆ 1982 – Շահին Ռ., Հայաստան և փորաքրատիպի արվեստը, Բեյրութ, 1982:

ՊՈՂՈՍՅԱՆ, ԹՈՔՄԱԶՅԱՆ, ՄՈՒՐԱԴՅԱՆ 2015 – Պողոսյան Ա., Թոքմաջյան Հ.,

KEVORKIAN, ASHDJIAN 1991 – Kevorkian R.H., Ashdjan B., Tapis Et Textiles Armenians, Marseille, 1991.

KEVORKIAN, KOUYMIJIAN, ALLIER 2007 – Kevorkian R.H., Kouymjian D., Allier D.S., Trames d'Armenie, Marseille, 2007.

Hrazdan Tokmajyan

National Polytechnic University of Armenia

hrazdantok@hotmail.com

MALATIA WOVEN STITCH

Keywords: Armenian needlework, Cilician needlework, woven stitch, Malatia, Marash, parallel views, dowry handmade.

One of the most interesting form of Armenian Needlework is Marash woven stitch. It is one of the oldest ways of needlework, it is not only preserved among the Marash people, but it has widely spread as well.

Albums, researches and manuals on Marash stitch have been published.

Since 2007 we have acquainted with hundreds of needlework kept in families. We have studied pieces of needlework kept in a number of museums and private collections.

In recent years, having summed up some data, we have come to the conclusion that as a certain group introduced under the name Marash stitch, however distinguishes among other to some extent.

Handmade it once belonging to this group differ in their color and compositional structure, ornaments and technical peculiarities. In the course of our research we have recorded that these handmade items are sometimes introduced as Marash stitch, in some other case as Malatia stitch in different publications and sources. The authors of the items, apart from 2 cases, are unknown. It is due to mention that in the above mentioned 2 cases the women authors of the handmade items were from Malatia. They are Yeghisabet Incheyan and Narduhi Taragchyan who deported from Malatia to Syria because of the genocide.

⁴ Ավելորդ չէ նշել, որ նույն գրքում տպագրված երկու Այնթապի ասեղնագործություն կա, որոնց առկայությունը գրքում առավել անբացատրելի է:

Taking the above-mentioned data into account, we have come to the following conclusion. Simultaneously with "Marash woven stitch" there also existed of "Malatia woven stitch". Both forms of stitch belong to the same family, i.e. woven stitch. At the same time, they have obvious peculiarities which enable us to classify them into two different groups.

Раздан Токмаджян

Национальный политехнический университет Армении

hrazdantok@hotmail.com

ПЛЕТЕННЫЙ ШОВ МАЛАТИИ

Ключевые слова: Армянская вышивка, Киликийская вышивка, плетеный шов, Мала-тия, Мараш, параллельные виды, приданое рукоделие.

Одной из самых интересных форм армянской вышивки является «плетеный шов» Мараша. Это одна из древнейших форм вышивки, сохранившаяся не только у марашцев, но и широко распространенная. Изданы альбомы, исследования, учебные пособия, посвященные Марашской вышивке. С 2007 года мы познакомились с сотнями ручных работ (вышивок), хранящихся в семьях. Мы исследовали работы, хранящиеся в ряде музеев и частных коллекций.

В последние годы, на основании данных, мы пришли к выводу, что среди вышивок, представленных как «Марашский шов», выделяется группа, которая, будучи очень похожей на других, тем не менее, в определенной степени несколько отличается. Рукоделия, относящиеся к этой группе, отличаются цветовым и композиционным строением, орнаментом и техническими особенностями.

В ходе наших исследований мы констатировали, что эти вышивки представлены в различных изданиях и источниках, иногда как «шов Мараша», а иногда и «шов Малатя». В то же время мы заметили, что авторы встреченных нами работ, за исключением двух случаев, неизвестны. Примечательно, что в упомянутых выше двух случаях женщины – рукодельницы родом из Малатии. Это Элизабет Инчян и Нардуй Тарагчян, депортированные из Малатии в Сирию во время геноцида. Опираясь на приведенные выше данные, мы пришли к следующему выводу: параллельно с «плетеным швом» Мараша существовал также «плетеный шов» Малатии. Эти две формы шитья принадлежат к одному семейству (плетеный шов). В то же время они имеют очевидные особенности, которые позволяют нам разделить вышивки на две разные группы.